Համընդհանուր պատմություններ առանց բաժանարար գծերի Եվրոպայի համար

- Արդյունաբերական հեղափոխության ազդեցությունը
- Կրթության զարգացումը
- Մարդու իրավունքների արտացոլումը մշակույթի պատմության մեջ
- Եվրոպան և աշխարհը

universität wien

Austrian Chairmanship
Council of Europe
November 2013 – May 2014
Présidence de l'Autriche
Conseil de l'Europe
Novembre 2013 – Mai 2014

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Պատմության դասավանդումն ուղենշող է... Այն վճռորոշ գործոն է ժողովուրդների միջև հաշտություն, ճանաչում, փոխըմբռում և փոխվստահություն հաստատելու գործում:

Էլեկտրոնային հրատարակություն

«Համընդհանուր պատմություններ»-ն արտաքին աղբյուրներին հղում ունեցող ինտերակտիվ էլեկտրոնային գիրք է: Այն դասավանդելու և սովորելու օրինակելի նյութերի ժողովածու է՝ առաջին հերթին նախատեսված լինելով ուսուցիչների վերապատրաստման համար: Գիրքը համապատասխանում է վերապատրաստման բոլոր՝ նախնական, զուգահեռ, ծառայողական և լրացուցիչ ձևերի համար: Բովանդակային բաղադրիչը հատուկ այնպես է շարադրված, որ գրքի տարբեր հատվածներ հնարավոր լինի օգտագործել տարբեր տարիքի աշակերտների համար:

Միջկառավարական նախագիծ (2010-2014)

«Համընդհանուր պատմություններ»-ն արդյունքն է միջկառավարական մի նախագծի, որն առնչվում է եվրոպական տարածաշրջանի՝ Եվրոպական մշակութային կոնվենցիան ստորագրած բոլոր երկրների վրա իրենց հետքը թողած պատմական ասպեկտներին:

Եվրոպացիների համար համընդհանուր են՝

- փոխգործակցությունը կամ փոխանակումները, որոնք վերածվել են երկկողմանի փոխազդեցության,
- համընթաց կամ զուգահեռ զարգացումը՝ համակարգված շփման առկայության կամ բացակայության պայմաններում,

- փոխլարվածությունն ու հակամարտությունները, ինչպես նաև հարաբերությունների բարելավման գործընթացները,
- բոլոր տարածաշրջաններին բնորոշ զարգացումներն ու վերափոխումները,
- եվրոպական փոխգործակցության արդի գործընթացը՝ մեկտեղելով մշակույթների և ինքնությունների մեծ բազմազանությունը:

Այս փոխներգործությունները, համընդհանրությունները, փոխլարվածությունները և վերափոխումները, որոնք ո՛չ ակնառու են եղել, ո՛չ էլ հերքելի, ազդել են արժեքների, արվեստի, մշակույթի, ժողովրդագրության, տնտեսության, գիտության, տեխնոլոգիայի, ապրելակերպի, տարածական պլանավորման և այլ ոլորտների վրա:

Գիրքը, որ Եվրոպայի պատմությունը դասավանդողների կոլեկտիվ աշխատանքն է, ուսումնասիրում ու բացահայտում է «համընդհանուր պատմություններ» հասկացության հետ կապված գաղափարներ:

Եվրոպայի խորհուրդը պատմության դասավանդման ոլորտում

Հիմադրումից ի վեր Եվրոպայի խորհրդի գործունեության ոլորտներից են եղել պատմությունը և պատմության դասավանդումը: Ակնառու է, որ պատմությունը նպաստում է քաղաքացիների կրթությանը Եվրոպայում և դրանից դուրս: Ինչպես նշված է 1954 թ. Եվրոպական մշակութային կոնվենցիայում, պատմության դասավանդումը դեր ունի տարբերությունները կամրջելու և մարդկանց մեկտեղելու գործում՝ փոխըմբռնում և փոխվստահություն հաստատելով Եվրոպայի ժողովուրդների միջև:

Ակնկալվում է, որ հրատարակությունը կնպաստի միջմշակութային երկխոսության և պատմության դասավանդման ոլորտներում Եվրոպայի խորհրդի շարունակական աշխատանքին, որը հիմվում է Նախարարների խորհրդի և Խորհրդարանական ասամբլեայի հետևյալ հանձնարարականների վրա՝ «Միջմշակութային երկխոսությունը և ուրիշի պատկերումը պատմության դասավանդման մեջ» (ՆԽ/Հանձ. (2011)6), «Պատմության դասավանդումը հակամարտային և հետհակամարտային գոտիներում» (Հանձ. 1880 (2009)) և «Պատմության դասավանդումը 21-րդ դարի Եվրոպայում» (Հանձ. (2001)15):

Այն ընդլայնում և զարգացնում է նախկին ծրագրերի դրույթներն ու արդյունքները, ինչպիսիք են՝

- բազմատեսանկյունության վերաբերյալ աշխատանքը, հատկապես՝ պատմության դասավանդման մեջ (Ռոբերտ Ստրադլինգի կողմից պատրաստված ուղեցույց ուսուցիչների համար),



- Եվրոպայի պատմության մեջ կարևոր շփման կետեր հանդիսացող և «Եվրոպական պատմությունների խաչմերուկներ»-ի հրատարակմանը հանգեցրած առանցքային տարեթվերի և իրադարձությունների շուրջ աշխատանքը, Եվրոպայի պատմության մեջ առանցքային հինգ դրվագների շուրջ տարբեր տեսանկյունները (2006 թ.),
- պատմության դասավանդման մեջ ուրիշի կերպարի շուրջ աշխատանքը, որն ընդգծել է մշակութային առումով բազմազան եվրոպական հասարակությունների պատմության դասավանդումը և հանգեցրել ԽԽ/Հանձն. (2011)6 հանձնարարականի ընդունմանը:

«Համընդհանուր պատմություններ»-ը հրատարակվել է 2014 թ.՝ Եվրոպական մշակութային կոնվենցիայի 60-րդ տարեդարձին:

Ի՞նչ ի նկատի ունենք՝ համընդհանուր պատմություններ ասելով

Երկար ժամանակ պատմության նկատմամբ մոտեցումը բնորոշվել է իրադարձությունների միակողմանի մեկնաբանություններով՝ հիմնականում այն պատճառով, որ պատմությունը և դրա դասավանդումը ծառայել և հաճախ դեռևս ծառայում է ազգակենտրոն ինքնությունների կարիքներին: «Համընդհանուր պատմություններ» հասկացության էությունը կարելի է նույնականացնել պատմական իրադարձության մեջ ներառված բոլոր կողմերի (սուբյեկտների) տրամախոսային (դիալեկտիկական) փոխազդեցության հետ: Այսպիսով, «համընդհանուր պատմության» մոտեցումը դիտարկում է պատմական իրադարձության բոլոր կողմերը, փոխազդեցությունները, զուգամիտումները և հակամարտությունները, և այս առումով այն ամենահամալիր և արդյունավետ մեթոդաբանական մոտեցումն է: Սա հնարավոր է դարձնում կարծրատիպերի, ինքնության առասպելների, ուրիշի կերպարի բացասական պատկերացման հաղթահարումը և այդ կերպ կարող է հանգեցնել միջմշակութային երկխոսության ու հակամարտությունների կերպարանափոխման: Այն ցույց է տալիս պատմությունն իր համալիր ամբողջությամբ:

«Համընդհանուր պատմություններ»-ը շեշտը դնում է ավելի շատ համընդհանուր իրադարձությունների, քան միևնույն իրադարձության տարբեր մեկնաբանությունների վրա՝ ուսումնասիրելով այն միտքը, որ ձեր պատմությունը նաև մեր պատմությունն է, և նույն կերպ մեր պատմությունը նաև մյուսների պատմությունն է, ինչը, սակայն, չի նշանակում, որ այն բազմագործոն չէ, քանզի «համընդհանուր» չի նշանակում «նույնը»:

Այս նախագիծը ուսումնասիրում է տարբերությունների ամբողջության մեջ համընդհանուր գաղափարները և հաստատում, որ բոլոր իրադարձությունները, այդ թվում՝ հակամարտությունները, համընդհանուր են: Սա նաև կարող է դիտարկվել որպես աշխարհագրական, պատմական և մշակութային համընդհանուր հարթակի առանձնացում: Երեք հիմական խնդիրներն են՝ բարձրացնել անդամ պետությունների պատմական ընդհանուր ժառանգության վերաբերյալ իրազեկվածությունը, պատմական փոխազդեցությունների և ընդհանրությունների մասին ավելի լավ գիտելիքների միջոցով նպաստել հակամարտությունների կանխարգելմանը և հաշտեցմանը, շարունակել տարածել Եվրախորհրդի նախարարների խորհրդի կողմից 2008 թ. որդեգրած «Արժանապատվությամբ ապրել միասին՝ որպես հավասարներ» միջմշակութային երկխոսության վերաբերյալ պաշտոնական փաստաթղթի դրույթները:

Նախագիծն իրականություն է դարձնում պատմության դասավանդման վերաբերյալ Եվրախորհրդի հանձնարարականները:

Ի՞նչ է պարունակում էլեկտրոնային գիրքը

Առարկան ամբողջությամբ վերցնելու փոխարեն ընտրվել են մի քանի թեմաներ: Յուրաքանչյուր թեմա կարող է առավելագույն թվով անդամ երկրների առնչվել, լավ փաստագրված է և փոխազդեցությունների, զուգամիտումների և ընդհանուր փոխակերպումների, այսինքն՝ համընդհանուր պատմություն ցուցադրելու որոշակի հնարավորություններ է տալիս:

Ընտրված թեմաներն են՝

- Արդյունաբերական հեղափոխության ազդեցությունը,
- Կրթության զարգացումը,
- Մարդու իրավունքների արտացոլումը մշակույթի պատմության մեջ,
- Եվրոպան և աշխարհը:

Յուրաքանչյուր նյութի համար հստակորեն ընտրված թեմաները ներկայացնում են կարևոր ու հետաքրքիր բացահայտումներ և գրավում ընթերցողին համապատասխան պատմական տեղեկություններով: Յուրաքանչյուր թեմա պարունակում է տարբեր տարիքային խմբերի համար նախատեսված դասանյութերի շարք: Սրանք բավարար են, որպեսզի օգնեն ուսուցչին՝ ստեղծելու իրենց ծրագրերին համապատասխան այլ դասանյութեր:

Այս հրատարակությունը հնարավոր չէր լինի առանց Նորվեգիայի կրթության և հետազոտության նախարարության ֆինանսական մեծ օժանդակության:

Ինտերակտիվ էլեկտրոնային գիրքը հասանելի է հետևյալ հասցեով՝

http://shared-histories.coe.int

Նկարները՝ Shutterstock, Եվրոպայի խորհուրդ
Էջատումը՝ DPPD, 2016 թ. մարտ
Հրատարակվել է ԵԽ-ում

PREMS 213615

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE